ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

04-ը նոյեմբերի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի՝
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ սոցիալական աշխատանք իրականացնող բոլոր մասնագետներին. անչափ կարևորում եմ ոլորտի ներկայացուցիչների մարդասիրական ու պատասխանատու գործունեությունը, սրտացավ վերաբերմունքը բնակիչների սոցիալական խնդիրների վերհանման և հնարավոր լուծումների բացահայտման գործում:

Առանձնահատուկ ուզում եմ անդրադառնալ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժնի, Միասնական սոցիալական ծառայության Աբովյանի տարածքային կենտրոնի, Աբովյանի երեխաների աջակցության կենտրոնի մասնագետներին, որոնք իրականացնում են հետևողական աշխատանք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների ու անձանց տարաբնույթ խնդիրները կարգավորելու ուղղությամբ:

Իմ անմիջական ուշադրությամբ խոցելի խմբերի անձանց և ընտանիքների խնդիրները մշտապես պատշաճ դիտարկվում են և կազմակերպվում կարիքների գնահատման, սոցիալական, առողջապահական, կրթական և տարաբնույթ այլ աջակցությունների տրամադրման ծավալուն աշխատանքներ:

Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմում միաժամանակ շարունակական բնույթ են կրում Արցախից տեղահանված ընտանիքների հետ տարվող խորհրդատվական և օժանդակությունների տրամադրման աշխատանքները:

Սիրելի՛ սոցաշխատողներ.

Անչափ գնահատելով ձեր համբերատար ու հոգատար վերաբերմունքը՝ կրկին շնորհավորում եմ մասնագիտական օրվա առիթով, մաղթում եմ բարեկեցություն, անսպառ եռանդ ու հաջողություններ ձեր ստանձնած շնորհակալ ու հանրօգուտ աշխատանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**